և Գիւմիւշ Հանէ կոչեցաւ, որ բազում անգամ աւերեալ 'ի Պարսից և աւարեալ 'ի Քրդաց, չէն և կանգուն կայ պարսպօք ամրացեալ: Յաւանձին մատրունս եկեղեցւոյն պահին նշխարք Ս. Կարապետին և Աթանագինեայ, Ս. Ստեփանոսի և այլոց սրբոց. Լուսաւորչի գաւազաներս համարի մատուռն Ս. Յարութեան: Արտաքոյ պարսպացն կան մատրունք հանդստարանաց Ս. Անտոնի և Կրօնիդեայ և Եօթանց խոստովանողացն, և հեռագոյն ծգնարանք նոցա և գերեզմանք ուխտին: Առաջնորդ վանացս ունի թեմ զհիւսիսակողմն Մեղրայ, և միաբանքն են իբրև 30 ոգիք. յառաջ քան զսակաւ ամս ուղղեցաւ անդ և վարժարան մանկանց: — Յարևելից վանացս ժամուք հեռի կայ Աշքալէ որ է Յաշիտ տեղիք բազմաղող պաշտամանց դից, ուր զառաջին եկեղեցին կանգնեաց Լուսաւորիչն, որ կործանեալ և նորոգեալ, արդ 'ի մատուռն մի ևեթ փոխեալ է. յորում ամփոփեալ կան նշխարք մեծին Սահակայ Պարթևի և դստեր նորին Շուշանայ: Ի հարաւոյ նորա և մերձ յԵփրատ կան Մամախաթուն կամ Մանրախաթուն, յորում ամփոփեաց Լուսաւորիչ զմասն նշխարս Ս. Կարապետին: Մերձագոյն յԵփրատ 'ի հիւսիսոյ՝ կայ Ոռնիքլուր բերդ 'ի սրակատար բլրի, ուր ամրանայր Ալայէտտին բռնաւոր, վասն որոյ Օսմանեանք քանդեցին զբերդն: — Ի հարաւոյ նորա կայ Սուլուխ գեօղ և կամուրջ երկայն 14 կամարօք 'ի վերայ Մուրատայ, շինեալ յաւերակաց Աշտիշատայ 'ի Լէնկթիմուրէ: — Ի հարաւոյ Ս. Կարապետին կայ Կուրքան գեօղ, առ որով Մուրատ (որ և Եփրատ) աչեղ գնդլմամբ իջանէ ընդ զառիվայր դարս յորդահոսան և քարավէժ ալեօք և անցանէ 'ի վիճակն Կինճայ:

80. Յարևելից Մշոյ և յարևմտակողմն ծովուն Վանայ, 'ի հիւսիսոյ Բաղիշու և 'ի հարաւոյ Պուլանըգայ՝ կայ վիճակն ԽԼԱԹ, 'ի ԲԶՆՈՒՆԵԱՑ գաւառի Վասպուրական աշխարհի, յորմէ և ծովն անուանեցաւ Բզնունեաց Ծով: Ի սմա ամբառնայ Նեբրովթայ լեառն՝ Նէմրութ կամ Մոմրութ կոչեցեալ, իբրև 9–10000′ բարձրութեամբ, և է հրաբուխ շիջեալ, ջրալիր բաժակաւ, զոր և շտեմարան աղբեր Մեղրայ գետոյն ասեն լինել: Ի հիւսիսակողմն նորին կայ Նազիկ լիճ (18) կամ Նաղիկ, և 'ի հարաւակողմն Բըղդըղ-թափէսի անուանեալ անհեդեդ քարինք 50 կամ 60 եգեալք 'ի դաշտին, զոր ուղտերամակս ասեն լեալ Նեբրովթայ և 'ի քար փոխեալ՝ ցասմամբ Աստուծոյ, որ և զգաստակերտ նորա 'ի գլուխ լերինն՝ ջրասոյզ արար: — Քաղաքն ԽԼԱԹ մայրաքաղաք Բզնունեաց 'ի հնումն, և ԱԽԼԱԹ ըստ Արաբացւոց՝ կառուցեալ է 'ի հիւսիսային արևմտեան ծայր ծովուն 'ի սարահարթի խոնարհելոյ 'ի ծովն կոյս հրաշագեղ իմն և աննման դրիւք. լերամբք 'ի թիկանց, կապուտակաւ ծովուն զառաջեաւ և շուրջանակի պարտիզօք զուարճացեալ. պայծառանայր 'ի միջին դարս հարստութեամբ Թուրք թագաւորաց Շահի Արմէն կոչեցելոց, որոց մնացուածք դաստակերտից և շիրիմք հոյակապք և վայելչազարդք, քարանձաւք ձեռագործք, խուռն գերեզմանք և մահարձանք մահմետականաց, և բերդ աւերակ առ ծովեզերբն, յիշեցուցանեն զնախկին փառսն. իսկ այժմ աւեր և ամայի՝ բնակեալ է 'ի Քրդաց իբրև 100 տանց: — ժամաւ հեռի 'ի Խլաթայ կայ Մանէջանէ 'ի կողս լերին, շինեալ 'ի Թադէէ առաքելոյ, ըստ աւանդելոյ տեղացեաց. որք և ցուցանեն անդ զվէմն Գըռաճուն որմապատ մատրանաձև, զի 'ի նմա ասի չքացեալ գիւաց. առ ստորոտով նորին բղխեն աղբերք սառնորակ և ականակիտ ջրոց, և 'ի վէմն քանդակեալ են խաչք:

81. Յարևմտից հիւսիսոյ Խլաթայ կայ ՊՈՒԼԱՆԸԳ վիճակ, բաժանեալ 'ի Վերին և 'ի Ստորին, սա կոչի ԿՈՓ, որպէս և լճակն Խոչըս որ 'ի սահմանս նորա, յորմէ ելանէ և առու Կոփ-ճա կոչեցեալ. և առ նմին գիւղն Կոփ 150 տամբք. և յերի Վանքն Կոփայ յանուն Ս. Դանիէլի ծերոյ: Վերնոյն Պուլանըգայ գլխաւոր գիւղ է Եօնճալը 100 տամբք. բնակիչք վիճակիս են Քուրդք և Հայք կորովիք: — Յարևմտից վիճակիս ձգի Պըլէճան կամ Պիլէճան լեառն՝ ընդ հիւսիս 'ի Մուրատ գետ և ընդ հարաւ 'ի Նազուկ լիճ, յորոյ գագաթան զրուցեն բնակեալ երբեմն Պարոշայ (Պռոշ) ումեմն թագաւորի, և որդւոց նորա գահավիժեալ 'ի լճակն Կոփայ 'ի յափշտակել զկայծակնաթափ թուր հօրն իւրեանց, և հեղձեալք 'ի նմին տակաւին հոգիք նոցա տեսեն պայքարին 'ի ջուրսն ուրբաթու ուրբաթու: Յայն կողմն լերինն՝ այսինքն է յարևմուտս՝ կայ փոքրիկ վիճակն ԼԻՋ, համանուն գիւղիւ մերձ 'ի Մուրատ, 60 հայաբնակ քարաշէն տամբք: — Ի հիւսիսոյ Պուլանըգայ, յելից Վարդոյի և 'ի հարաւոյ Թէքմանայ (71) կայ ԽՆՈՒՍ վիճակ, յորում խաղան Դաղլարլը և Գալէճուխ և իջանեն 'ի Մուրատ 'ի Պուլանըգ. հովիտ է ընդարձակ, 'ի հարաւոյ ունելով զլերինս Խամուրբէկէտ, Ջէմոդ և Խամուր, և աղաջուր աղբերս շատ, յորոց շահ մեծ է. առ Դուզլա ջրով կայ 'ի բարձու բերդաքաղաքն փոքր ԽՆՈՒՍ որ է Խնուսաւան հին, հզօր պարսպօք և քարաշէն կամրջօք 'ի վերայ գետոյն, զորով կան և աւերակք եկեղեցեաց: — Յելից Խնուսայ և 'ի հիւսիսոյ Դուզլայ գետոյ կայ փոքրիկ վիճակն ԿԷՕՔՍՈՒ 'ի հարաւոյ Բասենոյ. յորում Չօմպալըլը գեօղ և Կէօքսու բնակեալ 'ի Քրդաց:

82. Յելից վիճակացս կայ ՄԱՆԱԶԿԵՐՏ կամ Մէլազկերտ վիճակ, 'ի հարաւոյ Պէլէն-Կէստէ լերանց Պայէզիտոյ և յարևմտից կուսակալութեան Վանայ, 'ի հիւսիսոյ Խլաթայ, և ունի զհին գաւառն ԱՊԱՀՈՒՆԻՍ մասամբ ՀԱՐՔայ: Քաղաքն ՄԱԼԱԶԿԵՐՏ որ է ՄԱՆԱՒԱԶԱԿԵՐՏ շինեալ 'ի Մանաւազայ յորդւոց Հայկայ՝ կայ յահեկէ Մուրատայ, առ փոքու վտակաւ. երբեմն աթոռ իշխանաց Ուշտունեաց և եպիսկոպոսի. 'ի ԺԱ դարու պաշարեալ 'ի Տուղրիլայ վայրապար, առաւ ապա յԱլփարսլանայ և աւերեցաւ. կիսաւեր կան ցարդ պարիսպք նորա հզօրք և բերդն, յորում նստի կողմնակալն. բայց բնակութիւն քաղաքին նուազեալ է, 'ի Քրդաց սակաւուց և 'ի Հայոց տանց իբր 50: Կամուրջք հաստակառոյցք արկեալ կան 'ի վերայ գետոյն և 'ի վերայ օժանդակի նորուն Սարը-սու կամ Բաթնաւ? կոչեցելոյ: Յարևմտից քաղաքին կայ Օթէն գիւղ աւերակօք հին շինուածոց. ասա թուի գումարեալ ժողովյ Յովհաննու Մանազկերտցոյ: — Գաբըրլըն գեօղ յելից հիւսիսոյ քաղա-